Արձանագրություն

(հանդիպումը կայացել է 2024թ. փետրվարի 23-ին)

Հանդիպմանը մասնակցում էին Արմավիրի մարզի «Մայիսյանի միջնակարգդպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտական խորհրդի 17 անդամներից 15-ը, բացակա՝ 2-ը:

Օրակարգում՝

1.Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Ս.Գալստյան)

2. «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների թվականների դպրոցի զարգացման ծրագիրը կազմելու առաջարկությունների քննարկում:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

Օրակարգում՝

1.Լսեցին-Դպրոցի ԱԽ նախագահ Ս.Գալստյանը ներկայացրեց օրակարգը:

Որոշում է

Ընդունել միաձայն:

Օրակարգում՝

Լսեցին-2.Դպրոցի տնօրենի հավակնորդ Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրի վերաբերյալ: Նա մասնավորապես նշեց, որ իր պաշտոնավարման 5 տարին լրանալու կապակցությամբ վերստին հայտարարվել է դպրոցի տնօրենի մրցույթ, և ինքը՝ որպես մրցույթին մասնակցող հավակնորդ, համաձայն ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի N181-Ն որոշման և ԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի N35-Ն հրամանի՝ նախաձեռնել է հանդիպումը՝ աշակերտական խորհրդի առաջարկությունները հաշվի առնելու, 2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում ներառելու համար:

Աշակերտական խորհրդի նախագահ Ս. Գալստյանը նշեց, որ իրենք արժևորում ու գնահատում են 2019-23թթ. դպրոցում արված փոփոխությունները: Թեև այս 5-ամյակն ամբողջ երկրի և հանրակրթության համար դժվար, փորձություններով լի ժամանակահատված էր, այնուամենայնիվ դպրոցում բազմաթիվ դրական փոփոխություններ եղան. դպրոցական ու արտադպրոցական խմբակները,

կահավորված 4 լաբորատորիաները, վերանորոգված ճաշարանը, SS միջոցների հարստացումը, կազմակերպված համադպրոցական և արտադպրոցական միջոցառումները, մրցույթներն ու մեր աշակերտների նվաճումներն ու հաղթանակները ասվածի վառ ապացույցն են: Ախ նախագահը խնդրեց տնօրենի հավակնորդ Ա.Սարուխանյանին շարունակել զարգացնել դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը, էսթետիկ տեսքն ու նյութատեխնիկական բազան, խստացնել ներքին կարգապահական կանոնները: Լուսինե Հովսեփյանն առաջարկեց խրախուսել ոչ ֆորմալ կրթությունը, ավելացնել օտարալեզու միջոցառումների թիվը, մեծ տեղ տալ ուսուցման նոր մեթոդներին ու հնարներին և ուսուցիչներին աջակցելու համար միջոցառումների կազմակերպման գործում ներգրավել բարձր դասարանների աշակերտներին: Նա առաջարկեց սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողությունն ավելի մեծացնել՝ փակցնելով իրազեկող պաստառներ ու ցուցանակներ: Առաջարկեցին նաև տարաբնույթ միջոցառումներ կազմակերպել՝ բացահայտելու շնորհալի երեխաների ներուժը, սովորողների հետ իրենց փորձով կիսվելու, նրանց խրախուսելու համար հաճախակի դպրոց հրավիրելով կայացած ու հաջողակ շրջանավարտներին:

Աշակերտական խորհուրդը, լսելով տնօրենի տեղեկատվությունը և քննարկելով առաջարկությունները,

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Խնդրել դպրոցի տնօրենի հավակնորդ Ա.Սարուխանյանին «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագիրը կազմելիս իրենց առաջարկությունները հաշվի առնել և ընդգրկել ծրագրում:
2. Առաջարկել Ա.Սարուխանյանին վերընտրվելու դեպքում միջոցներ ձեռնարկել դպրոցի հանդիսությունների և մարզական դահլիճները վերանորոգելու ուղղությամբ:
3. Դպրոցում ստեղծել շրջանավարտների խորհուրդ:

Դպրոցի աշակերտական խորհրդի նախագահ՝ Ս.Գալստյան

քարտուղար՝ Ա.Կասամանյան